# Մրցույթին մասնակցելու Հրավեր

**«Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի Լրացուցիչ ֆինանսավորում» Ծրագիր** No. P116748
**«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» Ծրագիր** No. P146199
IFB №: HVEN-ICB-G-2016
**Պայմանագրի անվանումը՝ Հատուկ մեքենա-մեխանիզմների գնում**, **բաղկացած** 2 **լոտից**:

1. Հայաստանի Հանրապետությունը, Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի կողմից ստացել է վարկ՝ «**Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր լրացուցիչ ֆինանսավորում**» **և** «**Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում**» **ծրագրերի** համար: Նախատեսված է, որ այս վարկի միջոցների մի մասը տրամադրվելու է հետևյալ պայմանագրերով (Լոտերով) կամ նրանց ցանկացած կոմբինացիայով նախատեսված համապատասխան վճարումների համար՝ կապված Հատուկ մեքենա-մեխանիզմների գնման հետ (կազմված 2 Լոտերից):

2. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն այժմ ընդունում է փակ կնքված հայտեր իրավասու հայտատուներից՝ հետևյալ մատակարարումների և դրանց հետ կապված ծառայությունների համար՝

| ԼՈՏ 1, որը ներառում է՝ | | |
|---|---|---|
| **Հ/Հ** | **Անվանում** | **Քանակ** |
| 1 | Ավտոկռունկ 160տ | 1 |
| 2 | Ավտոկռունկ 60տ | 1 |
| 3 | Ավտոկռունկ 25տ | 2 |
| 4 | Ավտոաշտարակ | 3 |
| 5 | Հիդրոամբարձիչ կցորդի վրա | 13 |
| ԼՈՏ 2, որը ներառում է՝ | | |
| 1 | Մարդատար թրթուրավոր ամենագնաց | 3 |
| 2 | Մարդատար ամենագնաց ավտոմեքենա | 10 |
| 3 | Բեռնաուղևորատար ավտոմեքենա | 10 |
| 4 | Մանիպուլյատորով բեռնատար ավտոմեքենա | 2 |
| 5 | Ձյուն մաքրող մեքենա | 4 |
| 6 | Ձյուն մաքրող մեքենա (մինի) | 16 |
| 7 | Երկժանիք ամբարձիչ | 3 |
| 8 | Յուղատար ավտոմեքենա 10տ | 1 |
| 9 | Յուղատար ավտոմեքենա 5տ | 3 |
| 10 | Հորատող անիվավոր տրակտոր | 2 |
| 11 | Էքսկավատոր | 1 |
| 12 | Էներգետիկ շարժական փթարային ավտոարհեստանոց | 2 |
| 13 | Ավտոլաբորատորիա | 2 |

3. Հետաքրքրված իրավասու հայտատուները, հետագայում, կարող են տեղեկություն ստանալ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ից և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը աշխատանքային օրերին՝ ստորև նշված հասցեով, տեղական ժամանակով ժամը 9$^{00}$-ից մինչև 17$^{30}$-ը:

**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ**
**Զորավար Անդրանիկի փող**.1, **Երևան** 0084
**Հայաստանի Հանրապետություն**
**Հեռ.՝** + 37410 72 00 10

4. Հայտատուն պետք է բավարարի հետևյալ նվազագույն չափանիշները յուրաքանչյուր լոտի համար՝

a) Եթե Հայտատուն Արտադրող է

(i) Փորձառություն և տեխնիկական ունակություններ

Հայտատուն պետք է տրամադրի փաստաթղթային վկայություն, որ այն համապատասխանում է փորձառության հետ կապված հետևյալ պահանջներին՝
Յուրաքանչյուր լոտի համար համապատասխան Ապրանքների Արտադրողը պետք է ունենա՝

- Համապատասխան լոտով պահանջվող Ապրանքների արտադրման առնվազն 5 տարվա փորձ:
- Բացի դրանից՝ պետք է ունենա նույն Ապրանքի, առնվազն մեկ մատակարարման ավարտուն պայմանագիր՝ վերջին 3 տարիների ընթացքում:

(ii) Ֆինանսական հնարավորություններ

- Հայտատուն պետք է տրամադրի փաստաթղթային վկայություն, որ այն համապատասխանում է հետևյալ ֆինանսական պահանջներին՝
 Նվազագույն Միջին Տարեկան Շրջանառությունը, վերջին 5 տարիների ընթացքում, պետք է լինի Լոտ 1-ի համար՝ 7 մլն. ԱՄՆ դոլար, Լոտ 2-ի համար՝ 4,5 մլն. ԱՄՆ դոլար: Հայտին պետք է կցված լինեն ֆինանսական հաշվեկշիռները և անկախ աուդիտորների հաշվետվությունները՝ վերջին երկու (2) տարիների համար:

b) Եթե Հայտատուն արտադրող չէ

Եթե Հայտատուն արտադրող չէ, բայց առաջարկում է Ապրանքներ Արտադրողի անունից՝ համաձայն Արտադրողի Հավաստագրի ձևի՝ Արտադրողը պետք է ներկայացնի վերոնշյալ որակավորումները, ինչպես նաև՝ Հայտատուն պետք է ցույց տա՝

(i) Նմանատիպ փորձ

Լոտ 1-ի համար,

***Որ նա ունի Լոտ** 1-**ով պահանջվող ապրանքներից առնվազն մեկին համանման Ապրանքի մատակարարման, հաջողությամբ ավարտված, մեկ պայմանագիր՝** 2011**թ-ից մինչև** 2016**թ-ի ընթացքում: Պայմանագրի գինը պետք է լինի ոչ պակաս քան՝** 1,500,000 **ԱՄՆ դոլար կամ այլ արժույթով արտահայտված համարժեք գումար: Ներկայացված պայմանագիրը պետք է ուղեկցվի հանձնման-ընդունման ակտով:***

Լոտ 2-ի համար,

***Որ նա ունի Լոտ** 2-**ով պահանջվող ապրանքներից առնվազն մեկին համանման Ապրանքի մատակարարման, հաջողությամբ ավարտված, մեկ պայմանագիր՝** 2011**թ-ից մինչև** 2016**թ-ի ընթացքում: Պայմանագրի գինը պետք է լինի ոչ պակաս քան՝** 1,000,000 **ԱՄՆ դոլար կամ այլ արժույթով արտահայտված համարժեք գումար: Ներկայացված պայմանագիրը պետք է ուղեկցվի հանձնման-ընդունման ակտով:***

(ii) Ֆինանսական հնարավորություններ

Հայտատուն պետք է տրամադրի փաստաթղթային վկայություն, որ այն համապատասխանում է հետևյալ ֆինանսական պահանջներին՝
Նվազագույն Միջին Տարեկան Շրջանառությունը, վերջին 5 տարիների ընթացքում, պետք է լինի Լոտ 1-ի համար՝ 7 մլն. ԱՄՆ դոլար, Լոտ 2-ի համար՝ 4,5 մլն. ԱՄՆ դոլար: Հայտին պետք է կցված լինեն ֆինանսական հաշվեկշիռները և անկախ աուդիտորների հաշվետվությունները՝ վերջին երկու (2) տարիների համար:

5. Մեկից ավելի լոտերի համար պայմանագրի շնորհման դեպքում՝
- Պահանջվող հատուկ փորձը պետք է լինի առանձին լոտերի համար պահանջվող հատուկ փորձի հանրագումարը:
- Պահանջվող տարեկան շրջանառությունը պետք է լինի առանձին լոտերի համար պահանջվող տարեկան շրջանառության հանրագումարը:

6. Հետաքրքրված հայտատուների կողմից Մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը կարող է ձեռք բերվել՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ անունով գրավոր դիմում ներկայացնելու և ստորև նշված հաշվին՝ 200 (երկու հարյուր) ԱՄՆ դոլար չվերադարձվող գումարի չափով վճարելու դեպքում: Այդ փաստաթուղթը կուղարկվի էքսպրես օդային փոստով կամ կհանձնվի հայտատուի լիազորված ներկայացուցչին՝ չվերադարձվող գումարի վճարման մասին բանկային փաստաթղթերի ստանալուց անմիջապես հետո:

<u>Հաշիվներ վճարման համար՝</u>
Հայաստանի ոչ ռեզիդենտների համար (վճարում ԱՄՆ դոլարով)
Շահառու՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հաշվեհամար՝ № 1150001172630101
Շահառուի բանկ՝ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ք. Երևան, ՀՀ
SWITFT CODE: ARMNAM 22
Միջնորդ բանկ՝ DEUTSCHE BANK TRUST COMPANY AMERICAS NEW YORK, USA
Հաշվեհամար՝ 04454448 SWIFT CODE: BKTRUS33

Հայաստանի ռեզիդենտների համար (վճարում ՀՀ դրամով)՝
Շահառու՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հաշվեհամար՝ № 2470139122970010
Շահառուի բանկ՝ ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ, ք. Երևան, ՀՀ
SWITFT CODE: ASHBAM 22

7. Ցուցումներ Հայտատուներին բաժնի և Պայմանագրի Ընդհանուր պայմանների դրույթները համապատասխանում են Համաշխարհային Բանկի Ստանդարտ Մրցութային Փաստաթղթերի դրույթներին՝ Ապրանքների Գնում (հրապարակված՝ 2015թ. ապրիլին):

8. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով՝ մինչև 2017թ. փետրվարի 14-ը, տեղական ժամանակով ժամը $11^{00}$-ը: Հայտերը պետք է ուղեկցվեն Մրցույթին մասնակցելու **Բանկային երաշխիքով**, ըստ հետևյալի՝

**Լոտ 1-ի** Մրցույթի մասնակցության երաշխիքի գումարը պետք է լինի՝ 50 000 (**հիսուն հազար**) **ԱՄՆ դոլար**:

**Լոտ 2-ի** Մրցույթի մասնակցության երաշխիքի գումարը պետք է լինի՝ 30 000 (**երեսուն հազար**) **ԱՄՆ դոլար**:

Յուրաքանչյուր լոտի համար պետք է ներկայացվի առանձին Բանկային Երաշխիք:

9. Հայտերը կբացվեն հրապարակայնորեն՝ հայտատուների լիազորված ներկայացուցիչների ներկայությամբ՝ ստորև նշված հասցեով, 2017թ. փետրվարի 14-ին, ժամը $11^{15}$:

10. Տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով՝

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն ՝ Պարոն Արթուր Բաղդասարյան
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Զորավար Անդրանիկի 1
Հեռ.՝ +37410-720010
Ֆաքս՝ +37410-720121
էլ. հասցե՝ hvenecvb@gmail.com
Կայք՝ www.hven.am:

11. **Ուշ ներկայացված հայտերը կմերժվեն**:

12. Մրցույթի Հրավերը հրապարակվելու է նաև Հայաստանի Գնումների կայքում, հետևյալ հասցեով՝ www.procurement.am

13. Հայտի պատրաստման գործընթացը արագացնելու նպատակով՝ Մրցութային փաստաթղթերը գնած Հայտատուներին կտրամադրվեն նաև դրանց էլեկտրոնային տարբերակները՝ PDF ֆորմատով և Տեխնիկական աղյուսակները (որոնք պետք է լրացվեն Հայտատուի կողմից)՝ MS Word ձևաչափով: